ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.10.2015թ.
264-ի 2

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Որքա՞ն գումար է ծախսվել այս տարվա “Էրեբունի-Երեւան 2797” տոնակատարության կազմակերպման եւ անցկացման նպատակով,
2. Ծախսված գումարի ո՞ր մասն է հատկացվել քաղաքային (պետական) բյուջեյից,
3. Խնդրում ենք տրամադրել այն ընկերությունների ցանկը, որոնք հաղթել են տոնակատարության համար կատարված գնումների մրցույթներում,
4. Խնդրում ենք նաեւ նշել մրցույթում հաղթած ընկերություններից յուրաքանչյուրից գնված ապրանքի/ծառայության քանակը եւ արժեքը՝ մեկ միավորի համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան